ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՄ ՔԵԶ
THANK YOU

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ՂՈՒԿԱՍ 17.11-19

*11 Երբ նա Երուսաղեմ էր գնում, Սամարիայի ու Գալիլեայի միջով էր անցնում: 12 Եվ մի գյուղ մտնելիս նրան տասը բորոտներ հանդիպեցին, որոնք հեռու կանգնեցին և
բարձրաձայն ասացին. 13 «Հիսո՛ւս, Վարդապե՛տ, ողորմի՛ր մեզ»: 14 Երբ տեսավ, նրանց
ասաց. «Գնացե՛ք, ձեզ քահանաների՛ն ցույց տվեք»: Եվ նրանք գնալիս մաքրվեցին: 15
Նրանցից մեկը, երբ տեսավ, որ բժշկվեց, վերադարձավ՝ բարձրաձայն փառաբանելով
Աստծուն: 16 Նա երեսնիվայր ընկավ Հիսուսի ոտքերի առաջ և գոհություն էր հայտնում,
և ինքը սամարացի էր: 17 Հիսուսը պատասխանեց և ասաց. «Չէ՞ որ տասն էլ
մաքրվեցին, արդ այն ինը որտե՞ղ են: 18 Վերադարձողներ չգտնվեցի՞ն Աստծուն փառք
տալու համար, բացի այս այլազգուց»: Եվ նրան ասաց. 19 «Վեր կաց գնա՛, քո հավատը
փրկեց քեզ»:*

Այս մարդկանց առանձին պահելու պատճառը բժշկական անհրաժեշտությունը չէր. Հարցն այն էր, որ այս վիճակով մարդիկ համարվում էին հոգեպես անմաքուր: Որոշ ռաբբիներ ուսուցանում էին, որ մաշկի այս վիճակը պատիժ էր կոնկրետ մեղքերի համար՝ վերադառնալով Միրիամի այն դեպքին, երբ նա ապստամբեց իր եղբոր՝ Մովսեսի դեմ: Բայց կային շատ բաներ, որոնք կարող էին ձեզ անմաքուր դարձնել: Ամսվա որոշ ժամանակներում կանայք անմաքուր էին համարվում և ստիպված էին հեռու մնալ տղամարդկանցից և տաճարից, մարմնից ցանկացած արտահոսք կարող էր ձեզ անմաքուր դարձնել: Եթե դուք դիպչեիք դիակի կամ որոշ սատկած կենդանիների, դուք անմաքուր կհամարվեիք: Կրկին «մաքուր» պիտակ ստանալու համար պետք էր ոչ թե բժշկի, այլ քահանայի մոտ գնալ:

Հիսուսը իր ծառայության ընթացքում նպատակադրեց դիպչել անմաքուր մարդկանց, այդ թվում՝ բորոտներին, արյունահոսող կնոջը և մահացածներին: Մարդիկ, ովքեր անմաքուր էին համարվում, իրավունք չունեին գնալ երկրպագության: Ես գտնում եմ, որ նույնիսկ այսօր մեր ընկերներից ոմանք կարծում են, որ չեն կարող եկեղեցի գալ, քանի որ անմաքուր են: Նրանք պետք է մաքրեն իրենց կյանքը, նախքան Աստծուն երկրպագելը: Անկասկած, մեր ընկերներից ոմանք կարծում են, որ մենք իրենց անմաքուր արհամարհանքով ենք նայում: Հիշու՞մ եք մաքուր և անմաքուր կենդանիների մասին, որոնք տեսիլքում հայտնվեցին Պետրոսին. տեսիլքի իմաստը, ինչպես Պետրոսը հասկացավ, այն էր, որ ոչ մի մարդ անմաքուր չէ: Աստված ընդունում է բոլորին:

I. ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԾՆՈՒՄ Է ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅՈՒՆ:

GRATITUDE PRODUCES WORSHIP.

15 Նրանցից մեկը, երբ տեսավ, որ բժշկվեց, վերադարձավ՝ բարձրաձայն փառաբանելով Աստծուն: 16 Նա երեսնիվայր ընկավ Հիսուսի ոտքերի առաջ և գոհություն էր հայտնում, և ինքը ՍԱՄԱՐԱՑԻ ԷՐ:

- ***Հին Կտակարանում կան 11 եբրայերեն բառեր, որոնք թարգմանվում են որպես Փառաբանություն, Գոհություն և երախտագիտություն:***

1. *Todah: A thanksgiving choir/Գոհաբանության երգչախումբ:*
2. *Barak: To kneel in thanksgiving/Ծնկի գալ ի նշան գոհության:*
3. *Tehillah: To sing a song of thanksgiving/Երգել գոհաբանության*
4. *Halal: To celebrate, glory in, be clamorously foolish about, exult in adoration of God/Տոնել, փառք տալ, խենթի պես աղմկել ուրախությամբ, ցնծալ Աստծուն երկրպագելով:*
5. *Yadah: To give thanks with extended hands/Ձեռքերը բարձրացրած շնորհակալություն հայտնել:*
6. *Zamar: To give thanks with a musical instrument/Երաժշտական գործիքների ձայնակցությամբ շնորհակալություն հայտնել:*
7. *Shabach: To give thanks in a loud tone/Բարձրաձայն ելևէջներով շնորհակալություն հայտնել:*

Սաղմոս 100.4 – Նրա դռները մտե՛ք գոհությամբ (Todah - Գոհաբանության երգչախումբ), նրա սրահները՝ փառաբանությամբ (Tehillah - Երգել գոհաբանության). գոհացե՛ք նրանից (Yadah - Ձեռքերը բարձրացրած շնորհակալություն հայտնել) և օրհնեցե՛ք (Barak - Ծնկի գալ ի նշան գոհության) նրա անունը:

II. ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՆ Է, ԻՆՉ ԴՈՒ ԶԳՈՒՄ ԵՍ: ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՈՒՆՆ ԱՅՆ Է, ԻՆՉ ԴՈՒ ԱՆՈՒՄ ԵՍ:

GRATITUDE IS WHAT YOU FEEL, AND THANKSGIVING IS WHAT YOU DO.

Մի բան է երախտապարտ լինելը, մեկ այլ բան է շնորհակալություն հայտնելը: Երախտագիտությունն այն է, ինչ Դու զգում ես: Շնորհակալութունն այն է, ինչ Դու անում ես: - Թիմ Քելլեր

17 Հիսուսը պատասխանեց և ասաց. «Չէ՞ որ տասն էլ մաքրվեցին, արդ այն ինը որտե՞ղ են: 18 Վերադարձողներ չգտնվեցի՞ն Աստծուն փառք տալու համար, բացի այս այլազգուց»:

Մնացած ինը վազում են դեպի տաճար, բայց ո՞ւր կարող է գնալ Սամարացին: Սամարացուն չթողեցին տաճար մտնել: Չկար մի քահանա, ով նրան մաքուր կհայտարարեր: Ինչ վերաբերում է հրեաների մեծամասնությանը, նա անմաքուր է ծնվել և անմաքուր կմեռնի: Նա վերադարձավ Հիսուսի մոտ, քանի որ Հիսուսն այն ամենն էր, ինչ ուներ: Ինչպես Պետրոսը հարցրեց Հիսուսին մեկ այլ իրավիճակում. «Ուրիշ ո՞ւմ մոտ կարող ենք գնալ»: Բոլոր վտարվածներից ամենաերախտապարտն էր կրկնակի հեռացվածը: ՍԱՄԱՐԱՑԻՆ!

Հռոմեացիս 1.21 – Քանի որ Աստծուն ճանաչելով՝ նրան որպես Աստծու չփառավորեցին կամ գոհություն չհայտնեցին, այլ իրենց մտածումներում ունայնացան, և նրանց անմիտ սրտերը խավարեցին:

Ա Թես. 5.18 – Ամեն բանում գոհությո́ւն հայտնեք, որովհետև սա է ձեր հանդեպ Աստծու կամքը Քրիստոս Հիսուսով:

Եբր. 13.15 - 15 Ուստի նրա միջոցով ամեն ժամանակ Աստծուն օրհնության զոհ մատուցենք, այսինքն՝ նրա անունը դավանող շրթունքների պտուղը:

III. ԳՈՎԱՍԱՆՔՆ ՈՒ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆԸ ԻՍԿԱԿԱՆ ՀԱՎԱՏՔԻ ԱՊԱՑՈՒՅՑՆ ԵՆ:
PRAISE AND THANKSGIVING ARE EVIDENCE OF GENUINE FAITH.

Եվ նրան ասաց. 19 «Վեր կաց գնա՛, քո հավատը փրկեց քեզ»:

Կող. 2.7 - Արմատացած եւ նորանում շինուած, եւ հավատքում հաստատուած՝ ինչպէս որ սովորեցիք՝ աճելով նորանում գոհութիւնով:

Կողոսացիներին 3.16-17 – 16 ...ձեր սրտերում երախտագիտությամբ օրհնե՛ք Տիրոջը սաղմոսներով, օրհնություններով ու հոգևոր երգերով: 17 Եվ ամենը, ինչ էլ որ անեք՝ խոսքով կամ գործով, ամեն բան Տեր Հիսուսի անունո՛վ արեք՝ նրա միջոցով գոհություն հայտնելով Աստծուն և Հորը:

ԻՆՉ Է ԱՍՈՒՄ ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ՔԵԶ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ

Նկատեցի՞ք, թե ինչ է տեղի ունենում պատմության վերջում: Սամարացին վերադարձավ և ասաց «Շնորհակալություն», իսկ Հիսուսն ասում է՝ «Վեր կաց գնա՛, քո հավատը փրկեց քեզ»: Ոչ թե «քո երախտագիտությունը քեզ առողջացրեց», այլ քո հավատքը: Հիսուսը գիտեր, որ այդ մարդու հավատքը արտահայտվում էր որպես երախտագիտություն, իսկ երախտագիտությունը, հավատքի ձև է: Հավատքը կախված է Աստծո շնորհից և ողորմությունից: Երախտագիտությունն այն զգացումն է, որը ծագում է սրտում կախված լինելով Աստծո շնորհից: Գերմանացի միստիկ Էքհարթն ասել է. «Եթե միակ աղոթքը, որը դուք ասում եք ձեր ողջ կյանքում, «շնորհակալություն» է, դա բավական է»: Շնորհակալության աղոթքը հավատքի աղոթք է՝ վստահելով, որ ձեր բժշկությունը և յուրաքանչյուր օրհնություն բխում է Աստծո սիրուց: Եկեք աղոթենք այդ աղոթքն այսօր և ամեն օր: Ամեն.